ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.02.01-11

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

31.01.2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրենի պաշտոնակատար Ա. Արշակյանին, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի շրջանակներում «Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջին տարեկան 314 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է 90 846 000 (իննսուն միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց Պատվիրատունը պարտավորվում է ուսանողական նպաստի տրամադրման ձևով իրականացնել ուսման վճարի փոխտրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	Ք. Արմավիր, Երևանյան 36
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900011005460	Հ/Հ 900338000525
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրենի պաշտոնակատար՝
_____ Վ. Գասպարյան	_____ Ա. Արշակյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ